«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ
22 Հանրապետության փող.
0010 Երևան, Հայաստանի Հանրապետություն
Հեռ. +374(10) 544-301/307/309
Էլ. փոստ: info@bakertillyarmenia.com
www.bakertillyarmenia.am

N 032609
ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
«Բեյքեր Թիլլի Արմենիա» ՓԲԸ
Գլխավոր տնօրեն

Վահե Գևորգյան

«Էլեկտրոնային առողջապահության ազգային օպերատոր» ՓԲԸ-ի ղեկավարությանը

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Էլեկտրոնային առողջապահության ազգային օպերատոր» ՓԲԸ (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի վերաբերյալ համառոտագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝ 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված *«Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի»* (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և էթիկայի համապատասխան պահանջների, որոնք կիրառելի են ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, և կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ էթիկայի նշված պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

ADVISORY · ASSURANCE · ACCOUNTING · TAX
Baker Tilly Armenia CJSC trading as Bakertilly is a member of the global network of Baker Tilly International Ltd., the members of which are separate and independent legal entities.

bakertilly

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին վերահսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝ անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Ընկերության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- Որոշակիացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին վերահսկողության չարաշահում:
- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Ընկերության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:

bakertilly

- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ ներքին վերահսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Լուիզա Հովհաննիսյան

Աուդիտոր

11 մայիս 2026թ.

ADVISORY · ASSURANCE · ACCOUNTING · TAX
Baker Tilly Armenia CJSC trading as Bakertilly is a member of the global network of Baker Tilly International Ltd., the members of which are separate and independent legal entities.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	Ծանոթ.	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	584,547	672,849
Ոչ նյութական ակտիվներ	5	103,077	104,704
Հետաձգված հարկային ակտիվներ		2,587	2,346
		690,211	779,899
Ընթացիկ ակտիվներ			
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	6	91,072	134,501
Մնացորդներ բանկերում	7	304,681	195,107
		395,753	329,608
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		1,085,964	1,109,507
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Կապիտալ և պահուստներ			
Բաժնետիրական կապիտալ	8	50	50
Կուտակված շահույթ		556,710	448,000
Պահուստային կապիտալ		8	8
		556,768	448,058
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր	9	313,037	462,376
		313,037	462,376
Ընթացիկ պարտավորություններ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	10	61,762	64,347
Վարկեր	9	154,397	134,726
		216,159	199,073
ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		1,085,964	1,109,507

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2026թ. մայիս 11-ին:

Թի Քքաունթ ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝

Արմենուհի Կարապետյան

Գլխ. հաշվապահ

Նվեր Մանուկյան

Տնօրեն

1-20 ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	Ծանոթ.	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Հասույթ	11	910,816	867,796
		910,816	867,796
Այլ եկամուտներ		3,230	-
Ծրագրի սպասարկման ծախսեր		(293,185)	(291,157)
Աշխատավարձեր և հարակից հարկեր		(242,212)	(227,988)
Գործուղման ծախսեր		(4,304)	(402)
Սերվերային համակարգի սպասարկման ծախսեր		(37,518)	(32,036)
Հիմնական միջոցների նորոգման, սպասարկման ծախսեր		(13,779)	(11,376)
Ամորտիզացիոն և մաշվածության ծախսեր		(113,201)	(63,557)
Տարածքի վարձակալության ծախսեր	12	(18,250)	(10,450)
Լաբորատոր թեստերի արդյունքների վերաբերյալ ծանուցումների առաքման ծառայություն		(7)	(15)
Վճարային ծառայության մոդուլի սպասարկում		(5,962)	(4,390)
Հաշվապահական ծախսեր		(6,000)	(6,000)
Խորհրդատվական և աուդիտորական ծախսեր		(2,473)	(2,970)
Բուժաշխատողների ռեգիստրի մշակման ծրագրի շրջանակներում մատուցված ծառայությունների գծով կատարված ծախսեր		(1,175)	(4,121)
Մարքեթինգի և հանրային կապերի ծախսեր		(1,552)	(683)
Կոմունալ և գրասենյակային ծախսեր		(3,496)	(7,503)
Հեռախոսային և ինտերնետ կապի ծախսեր		(5,407)	(5,149)
Ապահովագրական ծախսեր		(7,186)	(6,429)
Բանկային ծախսեր		(177)	(247)
SMS ծանուցումների տրամադրման ծախսեր		-	(1,401)
Գործառնական այլ ծախսեր		(3,552)	(4,121)
Գործառնական գործունեությունից շահույթ		154,610	187,801

1-20 Ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ)

Ֆինանսական ծախսեր		(32,335)	(18,484)
Փոխարժեքային տարբերությունից օգուտ/(վնաս)		(885)	(1,653)
Շահույթ մինչև հարկերը		121,390	167,664
Շահութահարկի գծով ծախս	13	(12,680)	(22,912)
Տարվա շահույթ		108,710	144,752
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք հարկումից հետո		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		-	-

1-20 Ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	Բաժնետիրական կապիտալ	Կուտակված շահույթ	Պահուստային կապիտալ	Ընդամենը
2024թ. հունվարի 1-ի դրությամբ	50	303,248	8	303,306
Տարվա շահույթ	-	144,752	-	144,752
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	144,752	-	144,752
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք 2024 դեկտեմբերի 31-ի դրությամբ	50	448,000	8	448,058
Տարվա շահույթ	-	108,710	-	108,710
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	108,710	-	108,710
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք 2025 դեկտեմբերի 31-ի դրությամբ	50	556,710	8	556,768

1-20 Ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր		
Ծառայությունների իրացումից մուտքեր	1,090,059	1,009,874
Այլ մուտքեր գործառնական գործունեությունից	-	-
Ընդամենը գործառնական գործունեությունից մուտքեր	1,090,059	1,009,874
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների ելքեր		
Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարներ աշխատակիցներին	(181,218)	(168,547)
Վճարված հարկեր և այլ պարտադիր վճարներ	(130,768)	(108,752)
Վճարումներ մատակարարներին	(450,977)	(424,810)
Վճարված շահութահարկ	(38,171)	(10,800)
Այլ վճարներ գործառնական գործունեությունից	(4,611)	(994)
Ընդամենը գործառնական գործունեությունից ելքեր	(805,745)	(713,903)
Գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքեր	284,314	295,971
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների ելքեր		
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում	(14,791)	(849,751)
Ընդամենը ներդրումային գործունեությունից ելքեր	(14,791)	(849,751)
Ներդրումային գործունեությունից զուտ դրամական հոսքեր	(14,791)	(849,751)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների մուտքեր		
Վարկի ստացում	-	646,000
Այլ մուտքեր ֆինանսավորման գործունեությունից	3,230	-
Ընդամենը ֆինանսավորման գործունեությունից մուտքեր	3,230	646,000
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների ելքեր		
Վճարված տոկոսներ	(31,568)	(14,019)
Վարկի մարում	(130,435)	(50,133)
Այլ վճարներ ֆինանսավորման գործունեությունից	-	(3,230)
Ընդամենը ֆինանսավորման գործունեությունից ելքեր	(162,003)	(67,382)
Ֆինանսավորման գործունեությունից զուտ դրամական հոսքեր	(158,773)	578,618
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր	110,750	24,838
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	(1,176)	(1,283)
Դրամական միջոցները տարեսկզբին	195,107	171,552
Դրամական միջոցները տարեվերջին	304,681	195,107

1-20 Ծանոթագրությունները կազմում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը